

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ածն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր ըստ 2 կոպեկի:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գրքով և նոյն պրոգրամայով: Մեր ստանում ենք սե-
փական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրակարգ և Բարձրակարգ փողոցների անկի-
նում Թամարայի տանը):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакція газетъ «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK»:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ երևանից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիական
միապետականների յոյսերը. Նամակ Թիւրքիայից.
—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բառեր, բառեր
և բառեր:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Օգոստոսի 10-ին

Երևանի առևտուրը կատարելապէս ընկած է,
ամեն բան մուկլային անշարժութեան մէջ է
գտնվում: Բամբակի սեղծերը վերջնապէս թէ
Ռուսաստանի ֆիրմաները և թէ զօկերը վաղուց
արդէն քաղաքը թողել հեռացել են: Երբեք ըս-
կվելով, ծառայողները, խնտիլդեցիան, ժողովրդի
բարձր դասակարգը, թողնելով այսօր քաղաքը,
արդէն ազատ չունչ են քաշում դով ամառանոց-
ներում: Աշնան մօտ լինելու պատճառով վաճա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ ԵՒ ԲԱՌԵՐ

Մեր բուրժուականները «Մշակին» մեղադրում
են, որ նա գործ է ածում այդ տեսակ ընդհա-
նուր դարձած բառերը: Բայց ինչ անուն տանք
այդ պարոններին, որ իրանք, ընդդէմ լինելով
այդ բառերի գործածութեան, իրանք իրանց օր-
գանի մէջ գործ են ածում թէ այդ բառերը, և թէ
ուրիշ շատ օտար բառերը Չերկաբացիներու հա-
մար, մենք աւելորդ ենք համարում մասնաինքն
անել թէ որ բառը որտեղ է գործ դրած. իսկ ե-
թէ «Արձագանքի» հրատարակատեանը կը հա-
մարձակվեն պնդել, որ իրանք գործ չեն դրել
այդ տեսակ բառեր, այն ժամանակ մենք յանձն
կառնենք այդ ձանձրալի աշխատանքը ցոյց տա-
լու դրանց իւրաքանչիւրի գործածութեան տեղը,
միայն այն պայմանով, որ այդ պարոնները հրա-
պարակով յետ վերցնեն իրանց խօսքերը:

Մի ժամանակ այդ նոյն բուրժուականները ըս-
տովում էին թէ ինչպէս կարելի է գործածել այն-
պիսի օտար բառեր, ինչպէս են խնտիլդեցիա,
սէզոն, մեղորամ, կուլտուրա, կրիտիկա, տերմին,
ֆիզիկա, ըմբիս, սիստեմա, կոմպլեքս, սոցիա-
լիստ, բէպերտուար, ֆիլիսոփոս, դրամա, տակա,
կուլիսներ, օրգան, դէֆիցիտ, բուլվար, միլիտար,
ֆրադա, դիսլոմատ, պիեսա և ուրիշ այդպիսի
բառեր, բայց այժմ իրանք այդպէս ասողները, և

ուսկանները դիմել են Ռուսաստանի զանազան
քաղաքները ապրանք դնելու, իսկ ժողովրդի ստո-
րին մի մասը քաշվել է այդինքն, այնպէս որ
քաղաքի դատարկութիւնը և անշարժութիւնը խիստ
աչքի են ընկնում: Միակ կենդանութիւնը, որը նը-
կատվում է համարեա իւրաքանչիւր առաւօտ,
դա է մրգավաճառութիւնը. ամեն օր հազարա-
ւոր էջերի և ձիերի բեռներով միջ և հարիւրա-
ւոր սայլերով սեխ և ձմերուկ է բերվում Երևանի
մայրաքաղաքը և այդ բոլորը մի քանի ժամկէտ
թացքում վաճառվում, դնվում է: Առաւօտեան
վաղ, դեռ արեւ չը ծագած, մայրաքաղաքը լցված է
լինում միջ և վաճառող և գնորդներով. հենց որ
քիչ արեւ բարձրանում է, կողմակի գնորդները
իրանց բեռները վերցնում հեռանում են, իսկ տե-
ղացի մրգավաճառները իրանց բաժինը ձեռք բե-
րելով քաշվում են իրանց խանութները: Ծածկի
կամ վրանների տակ: Այդ ժամանակ մրգավաճառ-
վաճառը վերջանալով, մեռելային անշարժութիւն
և անկենդանութիւն է տիրում հրապարակի վրա:
Մի խօսքով ձմեռվայ սառնամանիքի խիստ ժա-
մանակ մայրաքաղաքը սրբան որ նկատվում է մարդ-
կանց բազմութիւն, նկատվում է կենդանութիւն,
նոյնքան այսօր, արեգակի կիզիչ ճառագայթների

ամբողջ հասարակութիւնը գործ են ածում այդ
բառերը, ինչպէս սեփական բառեր: Այդ դարձա-
նալի չէ, ի հարկէ. մեր լեզուն՝ դեռ շատ հարիւ-
րաւոր և հազարաւոր բառեր պէտք է փոխ առ-
նէ քաղաքակրթի լեզուներից. որքան լայնանան
ժողովրդի մտաւոր պահանջները, և որքան դրա
հետ միասին կարիք կը լինի հայերէնի վերածել
հարօպական գիտութեան, քաղաքակրթութեան, և
տեխնիկայի արդիւնները, նոյնքան էլ անհրա-
ժեշտ կը լինի վերցնել օտար լեզուներից այնպի-
սի բառեր, որ մենք չունենք, և որը նոյն իսկ
կեղծ ազգասիրութիւնից դրված հնարք և գոր-
ծադրել չէ կարելի: Այս է անհերքելի լեզուաբա-
նական ճշմարտութիւնը, եթէ կամենում էք իմա-
նալ:

Մեր սխալասիրտները առաջ, և մասամբ էլ
մինչև այժմ գործ են ածում դրաբարի այսպիսի
ձևեր և վերջաւորութիւններ, հեկեղեղույ, անձանց,
ամուսյս, ուրախութեանց, ընդամեն, գիւղացիք,
յարգանաց, գործոց, վաճառականաց, հայրենաց,
գերմանացոց, ըստ չափու և այլն: Նրանք կար-
ծում էին, որ գեղեցիկ չէ, երբ ասում են, եկե-
ղեցու, անձանցների, ամսի, ուրախութիւնների,
սրա հետ միասին, գիւղացիների, վաճառականների,
հայրենիքի, գերմանացիների և այլն: Եւ իրանք
այդպէս ասողները քիչ քիչ սկսել են գործածել
այդ նոր, աշխարհաբարին յատուկ վերջաւորու-
թիւնները: «Արձագանքի» գործները դեռ այժմ
էլ չարունակում են գործածել այդպիսի դրաբար
վերջաւորութիւններ և ձևեր, բայց մենք չենք էլ
տարակուսում, որ նրանք վերջապէս կը թողնեն
այդ սխալ ընթացքը և էլի կենթարկվեն միւս հո-
սանքին:

տակ հրապարակը անմարդաբան է և անկենդան
Այժմ այստեղի մնացած ժողովուրդը անհամ-
բեր սպասում է աշնանը, որպէս զի ամառանոց
գնացողները, վաճառականները, բամբակի առե-
տրականները վերադառնան քաղաք, և նորից վե-
րականգնվեն կենդանութիւնը և շարժողութիւնը:
Բայց արդեօք, Երևանի խնտիլդեցիան վերադառ-
նալով քաղաք, կարդարացնի ժողովրդի իր վրա
ոռնեցած յոյսը, թէ անցեալ տարվայ պէս ամբողջ
ձմեռը կանցնի անտարբերութեամբ: Արդեօք ա-
մօթ չէ Երևանի խնտիլդեցիային, մասաւանդ
մօտ 20—25 թւով ուսուցիչներին, որ Երևանի
պէս մի նահանգական քաղաքը, ամբողջ տարով
զրկված լինի անգամ թատրոնական ներկայացու-
մից և ամբողջով ասել խօսելուց յետոյ միայն
այն ժամանակ աշտղվի մի ներկայացում տալ,
կեր որ Երևանում կը յայտնվի մի որ և է թա-
փառական դերասան Այն ինչ գաւառական յետ
ընկած քաղաքներում, տարվայ ընթացքում, նա-
յելով լրագրական տեղեկութիւններին, մի քանի
ներկայացումներ են տրվում, այն էլ, պարզ բան
է, մտաւոր զարգացմամբ աւելի ստոր ուսուցիչ-
ների ավանդութեամբ, քան թէ Երևանի թեմա-
կան դպրոցի ուսուցիչները:

Թ. Տ. Մ.

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Փամոյնից եկեղեցու գործերը սկսում են բա-
րեկարգվել. սեպտեմբերի 19-ին նշանակված է
երեցիփոխանի ընտրութիւնը: Ինչպէս յայտնի է
դարձան ընտրված պ. Մելիք-Ղարաբեգեանի հրա-
ժարվել է իր պաշտօնից և այդ պատճառով նը-
շանակվում են նոր ընտրութիւններ: Իսկ ինչ վե-
րաբերում է վերոյիշեալ եկեղեցու հաշով պահ-
վող ուսուցչաբանի համար ձեռնարկներից ընտ-
րած հոգաբարձուներին, նրանք, ինչպէս լսում
ենք հաստատ աղբիւրներից, այս օրերս վե՛ր, Վա-
թողիկոսի ձեռքով հաստատված են իրանց պաշ-
տօնի մէջ: Վաթողիկոսի այս վերջին հրամանը
մի և նոյն ժամանակ վերջ է դնում ծխականների
և ժամաւորների իրաւունքների մասին յարուց-
ված տարաձայնութիւններին. հոգաբարձուներ-

«Արձագանքը» և դրա հետ միասին պահպանու-
ղական շփոթելն պատկանող բոլոր գրողները
վայնա ասում են: Ենթադրեցնում, որ «Մշակը»
գրում է՝ նրա, իր վրա, գտնվում, յունկար, սը-
փովել, տեսնվել, պատրաստվում, և այլն, փո-
խանակ գրելով՝ նորա, իւր, վերայ, գտնուում,
յունուում, սփուռել, տեսնուել, պատրաստվում
և այլն, և այժմ իրանք արդէն սկսել են գործ
ածել իրանց չը հաւանած և «Մշակի» գործածած
ձևերը:

Արեւար Գովհաննիսեան իր արքանեակներով կար-
ծում է, որ հայերէն չէ կարելի ասել «միմանց
մէջ ոչինչ բարոյական կապեր չունեն», «Սովորա-
նը որոշել է վճարաւ վերաբերվել», «ամբողջ սըր-
տից ցանկանում ենք» և այլ այդպիսի ֆրազներ:
Նախ այդպիսի ֆրազներ մենք կարող ենք մաս-
նանիչ անել մեր բուրժուականների օրգանների
մէջ. և երկրորդ՝ դուք են կարծում մեր ինքնակոչ
լեզուագէտները, թէ օտարաբանութիւն է
այդպիսի ֆրազները գործածելը. այդ տեսակ
ֆրազներ հարկւնեւորվ մտել են հարօպական լե-
զուներից ուսուց լեզուի մէջ, և այժմ դարձե-
լ են ուսուց լեզուի հանրածանօթ սեփականու-
թեան: Եւ նայելով որ դրա դէմ մի ժամանակ
սարսափելի կերպով բողոքում էին թիւթ ալավո-
սֆիլիները (նշումներով հարօպական քաղաքակր-
թութիւնը, մեր լեզուն կամայ ակամայ պէտք է
ընդունի և հարօպական լեզուներից ոչ միայն բա-
ռեր, այլ և ֆրազներ, որոնք սեփականութիւն
են հարօպական մշակված, կանոնաւորված և բո-
վանդակութեամբ հարստացած լեզուներին. այն-
պիսի ֆրազներ, որոնք սեփականութիւն են հա-
րօպական այժմեան ժողովուրդների յատուկ կեն-

րին ընտրել էին ծխականները առանց ժամաւոր-
ների մասնակցութեան: Հետեւապէս եթէ ընտրու-
թիւնները հաստատված են, նշանակում է նրանք
ձանաչված են օրինաւոր:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ
ներկայ նոյեմբերի 4-ին մտադրութիւն կայ կա-
տարել ժողովրդական լուսաւորութեան միջոցա-
ր. Գէլիանովի պետական ծառայութեան մէջ
մանկու յիսնամեայ յօրեկանը:

ԲԱՌՈՒՅ մեղ գրում են: «Կեռ օգոստոսի
4-ին տեղս ժամանեց Սպահանի և Հնդկաստանի
թիւների առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը, որը
Էջմիածին է կանչված: Օգոստոսի 15-ին սրբապա-
նը եկեղեցում քարոզ ասեց: Եկեղեցում այնքան
շատ ժողովուրդ հաւաքվեց, որ ասեղ զգեւու տեղ
չը կար: Ի միջի այլոց սրբապանը մեղ տեղեկու-
թիւններ տուեց մեր հեռաւոր եղբայրների մա-
սին, Պարկաստանի, Հնդկաստանի, Նաւայի և այլ
տեղերի հայերի մասին, որը շատ լաւ տպաւորու-
թիւն ունեցաւ լսողների վրա: Բազուից սրբա-
պանը ձանապարհ է ընկել դէպի Էջմիածին, տա-
նելով պարսից լա՛նի կողմից մի շքանշան վեհա-
փառ Կաթողիկոսի համար»:

ԹԷՆԱԿ մեղ գրում են, որ այդ քաղաքի հա-
յոց գերեզմանոցը ամենաողորմելի գրութեան մէջ
է գտնվում. նա ոչինչ պարսիսկ չունի և ամբողջ
գերեզմանոցի տարածութեան վրա արածում են
կովեր, եղներ, ոչխարներ, այծեր և այլ կենդա-
նիկներ: Հասկանալի է թէ արածող կենդանիները
որքան ապականում են գերեզմանոցը. բոլոր գե-
րեզմանները այդ կենդանիների արքով են ծածկ-
ված: Թղթակիցը դարմանում է, որ Թէլաի հայե-
րը այդ աստիճան դատապարտելի անտարբերու-
թեամբ են վերաբերվում դէպի իրանց ննջեցեալ-
ների հանգստարանը, անհոգութեամբ նայելով թէ
ինչպէս քրիստոնէական գերեզմանոցը պղծվում է
արածող հօտերի ոտների տակ:

Մեղ գրում են ԳՐԻԳՈՐԻՅ հետեւալը: «Չը նա-
յելով որ Գորիսից մինչև Եւլի փոստային ճանա-

ցաղավարութեանը, և որոնք չը կան և չէին կա-
րող լինել ոչ մեր հին, դրաբար, կրօնական, պատ-
մական գրականութեան մէջ և ոչ էլ մեր այժ-
մեան ժողովրդական բարբառների մէջ: Եւ վեր-
ջապէս որ և ինչ լօգիկայի հիման վրա էք պըն-
դում թէ չէ կարելի ասել «միմանց մէջ ոչինչ
բարոյական կապեր չունեն», կամ «ամբողջ սրտից
ցանկանում ենք»: Այդպիսի լօգիկային համապա-
տասխանող և լեզուի բառադասութեանը չը հա-
կասող նախադասութիւնների ընդունելը, կազ-
մել և գործածելը և՛ օգտակար և՛ ցանկալի է.
այդպիսի մտքեր յայտնող նախադասութիւններ
մենք չունենք: Մեր բուրժուականները միշտ կրկ-
նում են. «մեր դարու դարաքան ժարդը նոր
պահանջներ ունի». բայց կրկնում են առանց
հասկանալու, ապա թէ ոչ պէտք է իմանային,
որ մեր ժամանակակից, կրթված հայը իր բարո-
յական, սօցիալական և հասարակական մտքերը
արտայայտելու համար շատ անգամ պէտք է դի-
մէ հարօպական լեզուների մշակված ձևերին՝ ձե-
ւեր, որոնք մի ամբողջ միտք են արտայայտում.
ձևեր, որոնք չեն հակասում ազգակից լեզուների
հիմնական կազմութեանը: Միայն կըրել կուրա-
ցած մարդիկ կարող են ասել թէ՛ այդպիսի ֆրազ-
ներ գործածելով կարելի է աղաւաղել լեզուն....

«Մշակի» հակառակորդները օտարաբանութիւն
են համարում մեր լեզուի ողուն, բառակազ-
մութեանը և լօգիկային չը հակասող այդպիսի
ֆրազների գործածութիւնը. բայց իրանք մոռա-
նում են նոյն իսկ իրանց վերացական, սկսա-
լի օրիւն, և իրանց գրածներում գործ են
դնում այդպիսի շատ ֆրազներ:

Մեր հասարակութիւնը արդէն իւրացրել է այդ

պարհ կայ և այդ ճանապարհի վրա չորս հատ կայարան կայ, բայց փոստային յարաբերությունը այն աստիճան անկարգ ու անկանոն է, որ այստեղից մինչև Շուշի 88 վերստի տարածությունը ստիպված ենք փոստով շատ անգամ 3—4 օրում անցնել, այն ինչ ձիով կամ ջորով գնում ենք նորից տարածություն մի օրում Այդ տարբերակ երևույթը նրանով է բացատրվում, որ փոստի կայարաններում մեծ մասամբ ձի չը կայ, սակայն կայ և փոստի պահողները անհոգ կերպով են վերաբերվում դեպի իրանց պարտավորությունը։

Ղարաբաղի թեմի առաջնորդ սրբազան Կարապետ եպիսկոպոսը ՇՈՒՇՈՒՅ հեռագրով խնդրում է մեզ յայտնել մեր լրագրի միջոցով, որ Շուշու հայոց սեմինարիայի մէջ ուսուցիչների և ուսուցչուհիների բոլոր տեղերը բռնված են, ուստի ցանկացողները թող այլ ևս չը դիմեն վերոյիշեալ դպրոցի վարչությանը՝ պաշտօններ խնդրելու։

Մեզ հաղորդում են հետևեալը թիֆլիսի խարիտիկ անուանված թաղում բնակվում է չը-քաւոր արհեստավոր դասակարգ, որը իր հաշուով մի ծխական ուսումնարան պահելու կարողութիւնն չունի։ Այստեղի միակ քաղաքային հայոց ուսումնարանը չը կարողանալով խարիտիկ բազմաթիւ մանուկներին բաւականութիւն տալ, մտնում են ուրիշ թաղերի ուսումնարանները։ Բայց խարիտիկ թիֆլիսի միւս թաղերից և կենտրոնից այնքան հեռու է գտնվում, որ ամեն մի աշակերտ կամ աշակերտուհի ուսումնարան յաճախելու ամեն օր մի քանի վերստ է անցնում, բացի սրանից մանուկը անցնում է այնպիսի փողոցներով, որտեղ գտնվում են հասարակաց տներ և ուրիշ անբարոյական տեղեր, որ միշտ անպակաս են կաւի, հայտնաբեր և զգուշելի պատկերներ։ Այս բոլորն մանուկը անկասկածաբար է լինում ուսումնարան գնալիս կամ տուն վերադառնալիս։ Ահա այս է պատճառը, որ ծնողներից շատերը չեն համաձայնվում իրանց որդիներին, մանաւանդ աղջիկներին, հեռու ուսումնարան ուղարկել և թողնում են առանց ուսումնի, որը յետոյ շատ վատ հետևանք է ունենում։ Միողնքը իրանց որդիներանց պարագլուխներից ձանձրանալով, ուղարկում են այս թաղում գրեմնված զանազան գործարանները, սրան ապացոյց կարող է լինել նախկին Միրզոբեյի, իսկ այժմ Զիթախանի կտաւի գործարանը, որտեղ բանում են մի քանի տասնեակ հոգի 7—8 տարեկան մանուկներ, աշխատելով օրական 9½ ժամ և այդ բոլոր փորձարհասակները, գրեթէ առանց բացառութեան, խարիտիկի թաղիցն են թէ ինչպիսի ազադայ է սպասում այս մանուկներին, և ինչպիսի թէ ֆիզիկական և թէ բարոյական վնասներ պետք է կրեն, ամենելով փոքր հա-

Փրազները, որոնք ոչ թէ միայն ուսանելիս, այլ և եւրօպական շատ լեզուներով՝ ֆրանսերէնի, գերմաներէնի համար ընդհանուր են։ Կարծում են թէ լեզուի աղաւաղումն կը նշանակէ, երբ գործ ենք անում՝ «դուք ձեր ոտները տակ հող չունեք», կամ «դուք հիմը չունեք»։

Այդպիսի ֆրազները կազմելը և գործածելը, եթէ մինչև անգամ նորա գոյութիւն էլ չունենային օտար լեզուների մէջ, և խնկարի և լօգիկայի համեմատ է։ Խոսելով մի գիտնական, սօցիալական կամ լեզուաբանական հարցի մասին, մենք լօգիկաբար կարող ենք ասել մեր հակառակորդին թէ «դուք ձեր ոտները տակ հող չունեք» կամ «դուք ոչինչ հիմը չունեք»։ Այդպիսի ֆրազները գործածութիւնը ոչ թէ օտարաբանութիւն է, այլ հիմնված է միասնական բնական, նիւթական երևույթների վրա։ Մենք գիտենք, որ բոյսի միակ հիմը հողն է, մենք գիտենք, որ ամեն մի հաստատութիւն հիմը պետք է ունենայ, որպէս զի կարողանայ կանգնել և ամուր լինել։ Գաղափարական հարցերում և խօսակցութեան ժամանակ այդպիսի ֆրազները գործածելով, մենք օրինակ ենք վերցնում բնութիւնը, բոյսը, շինութիւնները և նիւթական աշխարհը, և որովհետեւ այն բոլոր միայն կարող է հաստատ լինել, որը իր տակ հող ունի, և որովհետեւ այն շինութիւնը միայն կարող է հաստատ լինել, որը հիմը ունի, այդ պատճառով, փոխաբերաբար, մենք այդ նմանութիւնն ենք տալիս և մեր դատողութիւններին, մեր խօսակցութեան ձևերին, և ասում ենք, «դուք ձեր ոտները տակ հող չունեք», երբ համոզված ենք, որ մեր հակառակորդը խօսում, գրում և փելխօսիւթիւնն է անում առանց

սակում գործարանում և աշխատելով անբարոյական հաստակաւորների հետ միասին, այդ դուշակի կարող է ամեն մի մարդ, որը փոքր ինչ ծանօթ է մեր գործարանական կեանքի հետ։ Ահա ուսումնարանների թիֆլիսի խարիտիկ թաղը, առաջնորդ մանուկ սերունդը՝ փողոցային և դանազան գործարանական վնասակար կեանքից, և այսպիսի մի ուսումնարանի կարեւորութիւնն զգացել է թեմիս սրբազան առաջնորդն էլ, որի ջանքով և աշխատութեամբ այս տարի սեպտեմբերից բացվում է խարիտիկում մի նոր եկեղեցական ծխական արական դպրոց, որի համար արդէն վարձվել է սուրբ Սարգսի օժտ եղած Մէլիքեանի տունը։ Իսկ իզական դպրոցի համար՝ սուրբ Սարգսի ծխականները և ժամաւորները պատրաստվում են ինքրամատոյց լինել կաթողիկոսին անձամբ, աշխատել, երբ կը բարեհաճի դալ թիֆլիս, խնդրելով Նորին Վեհափառութեան, որ նախ սուրբ Սարգսի եկամուտներից, որը ամբողջապէս գնում է իւրիշներին, մի որոշեալ մասը յատկացվի նոր բացվելի իզական ուսումնարանին և երկրորդ՝ դաւթում գտնված եկեղեցապատկան սենեակներին մի քանիսը յատկացվին ուսումնարանին։ Յոյս կայ, որ թեմիս սրբազան առաջնորդը խարիտիկացիների այս օգտակար և բարի գործը մէջ էլ իր աջակցութիւնը չի մերժի և կը բարեխօսի Նորին Վեհափառութեան առաջ, որը իր բարի ցանկութիւնն է տեսնել մի կանոնաւոր երկսեռ ուսումնարան խարիտիկում հաստատ հիմքերի վրա դրված։

Մեզ գրում են Նիժնի-Նովոգորոդի օգոստոսի 18-ից հետեալը։ «Սյունիք տնտէվաճառում մի քանի օր է ինչ որ ՎՊՊԳ գետը անդադար մեծանում է և քաղաքի Պէտլի ասված թաղում երկաթ ծախողների ժամանակաւոր շինված հարկաւոր տաքարները, բնակարանները և խանութները խորատուրված են ջրի մէջ։ Նրկաթեղէն ապրանքները թափված են ջրի մէջ, կամուրջի կէսը ջրի տակ է։ Ամբարները մինչև կամուրջը մարդկանց երթնելով են նաւակներով և կատարվում Բաղդադ-Երասխա ոչ մի մարդ խեղդված չէ։»

ԲԱՆԱՆՑ գիւղից մեզ գրում են։ «Գիւղիս այգետերերի համար երևացել է մի նոր թշնամի։ Դա արջերի բազմանալն է, որոնք իւրաքանչիւր գիշեր այցելութիւններ են անում դէպի այգիները, ոչնչացնելով տանձի և խնձորի ծառերը։ Անցեալ օրերը արջերի դոհ է գնացել և մի ձի։»

Գրական և գիտնական հիմքերի, մենք ասում ենք, «դուք հիմը չունեք», երբ համոզված ենք, որ մեր հակառակորդը իր դատողութիւնները ոչինչ վրա չէ ամրացրել, այլ օդի մէջն է կանգնած, այսինքն գուրկ է հիմքից։

Ուրեմն, պարոններ, այդպիսի ֆրազների գործածութիւնը օտարաբանութիւն չէ, այլ լօգիկայի և նոյն իսկ բնական, նիւթական երևույթների վրա հիմնած ձևեր, որոնք ընդհանուր են բոլոր կրթված, բոլոր զարգացած ազգերի և ազգակից լեզուների համար։ Այդպիսի ընդհանուր հիմքեր ունեցող ֆրազների գործածութիւնը օտարաբանութիւն չէ կարող համարվել։

Լեզուների մէջ կան դարձուածներ, որոնք յատուկ են մի լեզուի միայն, և որոնց թարգմանելը անկարելի է։ Բայց այդ դարձուածները ուրիշ դարձուածներ են, և դոցա փոխ առնելու մասին, ի հարկէ, ոչ չէ մտածում։ Որինակ, մենք մեր գաւառական բարբառներին մէջ ունենք այսպիսի դարձուածներ. «խօսքը կտուր մի դջի», «ձեռք վերցրու», «քո արեւը գիտնայ» և այլն։ Ի հարկէ ոչ մի ուսու դրող կամ թարգմանիչ չի թարգմանի և փոխ չի առնի այդ դարձուածները, և ոչ մի ուսու չի հասկանալ, եթէ նրա լեզուով սկսենք գործածել այդ դարձուածները, ասելով՝ «слово на крышу не бросай», «рыку беру», կամ «твое солнце знает» և այլն։ Ամեն լեզու ունի իր սեփական այդպիսի դարձուածներ, որոնց նոյն իսկ ծագումը շատ անգամ մոլոր է, և որոնց թարգմանելը, կամ փոխ առնելը միանգամայն անկարելի է։ Բայց ուրիշ բան են այդպիսի դարձուածները, և ուրիշ բան են վերեւ առաջ բերած նախադասութիւնները։

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՅՈՅՍԵՐԸ

Վերջին լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ զենեալ Բուլանժէի ունեցած աղողութիւնը, որի մասին առիթ ունեցանք արդէն խօսելու, փարիզի փողոցներում առաջ բերեց մի քանի ցոյցեր և դրա հետ միասին միապետականները յարմար ժամանակ համարեցին՝ իրանց ձգտումները աւելի պարզ արտայայտելու։

Միապետականները այժմ աւելի են յոյս դրել իրանց ապագայի վրա։ Թէ ինչ հիման վրա, — այդ դժուար է ասել, միայն թէ այդ կուսակցութիւնը ցոյց է տալիս, որ հաւատացած է, թէ ժամանակ է իրանց պատրաստվելու՝ կառավարութեան ղեկը ձեռք առնելու համար։ Միապետական կուսակցութեան աւելի համարձակ անդամները, ինչպէս Կասսանեակ, Լարզէն յայտարարեցին, որ հանրապետութիւնը ոչ թէ միայն մեռել է, այլ և թաղված է։ Այդպիսի դուշ է ծածուղաշարժ, բայց ոչ իմաստաւոր ֆրազներ այժմ շատ են արտասանվում փարիզի զանազան հիւրանոցներում տեղի ունեցող բանկէտների ժամանակ, որոնք կազմվում են ի պատիւ միապետական ղեկավարների։

Այդպիսի մի բանկէտ կայացաւ այս օրերս փարիզի «Continental Hotel»-ի մէջ ի պատիւ փարիզի դուքսի ծննդեան յիսնամեայ տարեդարձի, ուր ներկայ էին մինչև երեք հարիւր միապետականներ ինչպէս յայտնի է, փարիզի դուքսը այժմ միակ ժառանգն է ֆրանսիական թագաւորական գահին, եթէ միայն երբ և իցէ այդ դահլ կարող լինի կենդանանալ և կառավարել ֆրանսիան։ Այդ բանկէտի ժամանակ սենատոր Պակլէ մի ճառ խօսեց, որի մէջ յարձակվեց պատգամաւորների ժողովի և նրա գործ դրած ճշդումները վրա, և ոգևորութեամբ վերաբերվեց դէպի ազատամիտ-սահմանադրական միապետութեան վերականգնումը։ Ներկայ եղողները համաձայնութիւն յայտնեցին Պակլէի յայտնած մետաքսերին, և լեռնային մի ուղիղ ներկայացնել փարիզի դուքսին իսկ փարիզի դուքսը, ինչպէս հաղորդում են մի քանի լրագրիներ, այժմ երբեմն երբեմն թոյլ է տալիս իրան դուքսանաւու մի քանի բաղձանքներով, ինչպէս օրինակ «կայսրութեան մասին հրովարտակ հրատարակել» և այլն։

Այո, միապետական հրովարտակները մասին են մտածում այժմ միապետականների մի քանի ներկայացուցիչները, մանաւանդ որ Բուլանժէի, միապետականների այդ կոյր գործիքի ունեցած մի քանի աղողութիւնները վերստին են հանրապետական կուսակցութեան մի քանի ներկայացուցիչներին։

«Վրձազանքի» գրողները այնքան են խրվել ծայրայեղութեան և նենգամտութեան մէջ, որ մինչև անգամ ուզում են հաւատացնել իրանց միամիտ ընթերցողներին թէ «Մշակը» խրթին, անհասկանալի լեզուով է գրում։ Ասացեք խնդրեմ, ծիծաղելի չէ՞ այդ Մեր ընթերցող հասարակութեան ամենավերջին անդամին էլ յայտնի է, որ «Մշակի» լեզուի ամենաառաջին յատկանիշը պարզութիւնն է։ Բայց այդ պարոնները, որոնք իրանց յօդուածի մէջ մի երկու կտոր առաջ բերելով, ուզում են հաւատացնել, որ «Մշակը» գրում է ժողովրդին անհասկանալի լեզուով, պետք է գիտենան, որ քաղաքական-գրականական լրագրի զանազան բաժինների մէջ մի և նոյն լեզուով գրել չէ կարելի. չէ կարելի մի և նոյն լեզուով գրել առաջնորդողներ, ընդհանուր յօդուածներ, ֆիլիսոփայական, քաղաքական և գիտնական յօդուածի և առօրեայ մի որ և է խնդրի վրա դրած առաջնորդողի լեզուի մէջ պարզութեան տեսակետից՝ մեծ տարբերութիւն կարող է լինել։ Իսկ հեռագիրները թարգմանելու համար, որոնք առհասարակ լինում են սղմված, կարճացած և խրթնացած, ի հարկէ, պետք է գործ դնել աւելի սղմված և խրթնացած լեզու։ Հասկանալի է, որ քաղաքական կամ տնտեսական մի որ և է հեռագրի հայերէն թարգմանութիւնը աւելի դժուարութեամբ կարելի է հասկանալ, քան որ շատ աղամ մի հեռագրի հասկանալու համար, բացի լեզուից, նախապատրաստական տեղեկութիւններ պետք է ունենալ և քաղաքական աշխարհի և առհասարակ այն նիւթի մասին, որին վերաբերում է հեռագիրը։

Սակայն ընդհանրապէս հանրապետականները մի փոքր միայն վերադիւն են, և համարեա ուրիշ ոչինչ։ Վերադիւն կարելի է, ի հարկէ, որ փողի և զանազան վերացական խոստումներ միջոցով Բուլանժէ կարողանում է ձայների մեծամասնութիւն ստանալ երեք դէպարտամենտներում, վերադիւն կարելի է, ի հարկէ, որ փարիզի մէջ ուղերձներ են պատրաստվում միապետական դուքսերի համար, բայց երկիւղ կրել թէ հանրապետութեանը վտանգ է սպառնում, երկիւղ կրել, որ հանրապետութեան վախճանը մօտեցել է, եթէ մինչև անգամ շատ դուրեկ լինեն ֆրանսիայի սահմաններից դուրս հանրապետութեան դէմ լարվող ինտրիգաները, — շատ դժուար և շատ անտեղի է։

Մի րօպէ անգամ չէ կարելի կասկածել, որ հանրապետական կառավարութեան կողմակից բոլոր կուսակցութիւնները մի րօպէում կը միանան և ընդհանուր ոյժերով կը դիմադրեն միապետականներին, երբ վտանգը երևան կը դայ։ Մի րօպէ անգամ չէ կարելի կասկածել, որ Բուլանժէի անուամբ գրաւվող բանուորները իսկոյն կը դարձնեն իրանց երեսը, երբ պարզ կը տեսնեն, որ նրա ձգտումները միապետականների ձգտումներն են, և այն ժամանակ, ի հարկէ, օղը կը ցնդեն միապետականների յայտնած յոյսերը, և հանրապետութիւնը կը շարունակի իր օգտաւէտ գործունէութիւնը յօգուտ ֆրանսիայի։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԱՅՑ

Կ. Պոլիս, 17 օգոստոսի

Օրումն կարեւոր խնդիր Պապին այն շրջաբերականն է, որոյ մասին գրեցի անցեալ նամակաւ։ Այդ շրջաբերականի մասին չեմ ուզեր գրել, վասն զի կենդանաւոր թէ ձեր կողմէն ալ խըրկուած լինելու են. այստեղ առատօրէն բաժնուեցաւ ամէնուրեք։ Հայ-հռոմէական պատրիարքարանն այդ շրջաբերականներու օրինակները խրկեց մինչև անգամ մեր եկեղեցիներն, որպէս զի անկէ բաժնուին որոց որ անկէ, սակայն ետ խրկուած է։

Ինչ որ ալ լլլայ օրումն հետաքրքրութիւնը այս է. ամէնուրեք այս նիւթին վրայ կը խօսուի։ Պատրիարքական խնդիրը պահ մը մոռցուած է։ «Արեւել» գաւառ ընտանապետականներ կը հրատարակէ այդ առթիւ։ Հին կրքերը վերստին կը գրգռուին և մենք կարծես թէ մեր պապերու օրերը կապրինք։ Դա շատ թուրք է, «Գաղիկոսի ժողովը», «Լեւոնի տուժար», «Տաթևացի և Որոմոնցի», ասա ինչ որ զմիւ կը գրադրենք այժմ կարծեմ թէ սխալ որ եղաւ հռոմէական կղերիկ կողմանէ աղաքային շըրջաբերականի մը առաջումը։ Ո՛չ զի մէջ պապին հրաւերին անասալով կաթողիկոսեան կը դիմէ, և

«Մշակի» լեզուի պարզութեան մասին «Վրձազանքի» յօդուածագիրները կարծիքը մեզ միանգամայն զարմացում է։ Մենք աւելի բնական կը համարէինք, եթէ «Վրձազանքի» գրողները մի օր վերկենային և ասէին թէ «Մշակը» հայոց լեզուն չափից դուրս արդէն պարզ է դարձնում։ Բայց երբ այդ պարոնները խօսում են խրթին լեզուի մասին, — մենք զարմանում ենք, որովհետեւ դոցա այն գրողներն են, որոնք գրածը հասկանալու համար մի և նոյն նախադասութիւնը մի քանի անգամ պետք է կարդալ, և մարդ յոգնում է մինչև որ կը կարդայ և կը վերջացնի դոցա գրչի արտադրած մի որ և է նոյն իսկ փոքրիկ յօդուած։

Մեր անշարժականները ասում են, որ լեզուի վերաբերութեամբ «Մշակի» բռնած ընթացքը հետևողները չունենցաւ։ Ճշմարիտ միթէ պղպտիկ է Տեսնեցեք ինչ են ասում փաստերը։ Գուցէ «Վրձազանքի» հրապարակաւոյնների յիշողութիւնը թոյլ է, այդ պատճառով մենք առաջարկում ենք նրանց հետեւալը, նոյնը առաջարկում ենք և հասարակութեանը, վերջերք վերջին 15—20 տարվայ ընթացքում Անդրկովկասում լոյս տեսած բոլոր գրքերը, դասագրքերը և պարբերական հրատարակութիւնները, թերթիքներ «Մեղուն», «Մանկավարժանոց», «Վարժարան», «Փորձ», «Ժողովրդական», «Վարժարան», «Թերթիքներ» այն բոլոր գրքերը, որոնք հրատարակվել են սրանից՝ տասն և հինգ, տասն, ութ, եօթ, տարի առաջ, և համեմատեցեք դրանց լեզուն այժմ լոյս տեսնող գրքերի, և դասագրքերի, լրագրիների, շաբաթաթերթերի և ամսագիրների լեզուի հետ, համեմատեցեք, լաւ

եթէ հոռիմէական կողմերն կողմանէ ջանքն ան-
գուտ է, մերկաներու կողմանէ ալ այսքան իրա-
բանցում աւելորդ է:

Միայն խնդիր մը կայ զիստալ թէ արդեօք ար-
տաքին քաղաքականութեան մը թելադրութիւնը
կայ թէ ոչ այս խնդրոյն մէջ. հայ-հոռիմէականաց մէջ
զործող տեղեակ անձինք այս կարծիքին հակամէտ
են: Իսկ մենք պէտք է որ դժգոհ մնանք այս
չըջաբերականէն. դէթ ազգային անձնասիրու-
թիւնն իր կը փաղաքշի տեսնելով, որ հարկաւոր
միջոցներու հոգեւոր պետն եղող պապը քաղա-
քական արդի տագնապալից օրերու մէջ իւր ու-
շադրութիւնը կը դարձնէ մեր վրայ, և Արեւելից
մէջ մեր կարևորութիւնը ըմբռնելով իւր աչքերը
կը յառէ մեր վրայ: Այս շրջաբերականին տալիս
մենք ոչինչ բան չենք նկատիր, բայց եթէ վա-
տիկանաւ մէջ մեզ ընծայուած կարեւորութիւնը:

Հայ-հոռիմէականներու ազգային կեանքը գոր-
ծունեայ շրջանի մը մէջ մտնելու վիճակին հա-
սած է: Հայ-հոռիմէականք ալ այժմ ունեն իրենց
երեսփոխանական ժողովը, որ ընտրուեցաւ Պոլ-
սոյ քուէներովն, և այդ ժողովին մէջ կը գտնուին
տաղանդով և խելով նշանաւոր հայեր: Մինչև
մէկ ամիս այդ ժողովը կը սկսի իւր աշխատու-
թիւններուն, և պէտք եղած տեղեկութիւնները կը
հաղորդենք Աղաբեան պատրիարք բաւական յու-
ղեւոր օրեր պիտի անցունէ, վասն զի երեսփոխա-
նութեան մէջ իրեն հակառակորդ մաս մը կայ:

Առ այժմ այս խնդրոյ մասին ուրիշ ոչինչ:

Մեր պատրիարքական խնդրոյ մասին նոր ո-
չինչ ունինք: Վիճակը նոյնն է. կը սպասուի
Պատրիարքարանի և Կատական գործող նախա-
բարութեան միջև Սահմանադրութեան և Ներքին
կանոնադրի վերաբերեալ խնդրոյն կարգադրու-
թեան: Գուցէ այդ կարգադրութիւնը երկուր տեւէ
Կիտէք թէ մենք միշտ թերահաւատ ենք և չենք
հիշեր, որ մեր արդի ազգային իշխանութիւնը
ուղղամտութեամբ պաշտպանէ ինչ որ կը կար-
ծենք թէ ազգային շահն է: Ազգային իշխանու-
թեան տեսութիւնները տարբեր են և հետեանք-
ները լաւ չեն երևիր:

Պատրիարքական ընտրելիները նոյն վիճակի
մէջ են: Նար-Պէյեանք անցեալ շաբաթի մէջ մաս-
նական նիստ մը ունեցան, առաջիկայ շաբթուն
մէջ—օգոստոսի 22-ի երկուշաբթի օրը—վերստին
պիտի գումարին, աւելի բազմաթիւ, վճարական
միջոցներու վրայ խորհելու համար: Բարձրով-
մէստեանք աւելի մուծին մէջն կը գործեն, և
պէտք է խոստովանել թէ այս աւելի խելացիու-
թիւն է:—Ամենքս գործեն իրենց աղետաբեր
կըլլայ:—Իսկ Ալեքեանի համար նոր կուսակցու-
թիւնը տակաւին կազմուած չէ, բայց կազմու-
համար աշխատութիւններն սկսած են:

Տեսնենք ինչ կըլլայ մինչև առաջիկայ շաբաթ:
Այսօր կը սկսի քանդուել Ազգային հին հի-

ւանդանոցն և հիմ դրուել նոր հիւանդանոցին, ո-
րոյ վերաշինութիւնը պիտի տեւէ երեք տարի և
որուն համար աւելի քան 300,000 (երեք հարիւր
հազար) ռուբլ ծախս կը լինի:

Հայկակ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ
այժմ Պետերբուրգում է գտնուում ռուս յայտնի
ճանապարհորդ դիւնիստ Պրոքիմովսկի, որը շուտով
կատարելու է կրկին մի նոր ճանապարհորդու-
թիւն դէպի Միջին-Ասիա: Եթէ հանգամանքները
կը ներեն, իր այդ ճանապարհորդութեան ժամա-
նակ Պրոքիմովսկի մտադրութիւն ունի մտնել Տի-
բէթի խորքերը և մասնաւորապէս իրաւ, որը Տի-
բէթի նահանգի մայրաքաղաքն է, և բուրգայա-
կան կրօնի հետեւողներին համար սուրբ տեղ է,
ուր նստում է Գալայ-Ղաման, բուրգայական հո-
գեւորականութեան գլուխը: Մինչև վերջին ժամա-
նակներս աշխարհագրական գիտութիւնը շատ
կասկածելի և մութ տեղեկութիւններ ունի չինա-
կան այդ նահանգի մասին, ուր ընկալուած են ա-
ռաւելապէս բուրգայական կրօնի հետեւողները,
իսկ մայրաքաղաքում և այդ նահանգի ուրիշ քա-
ղաքներում ապրում է բուրգայական հոգեւորակա-
նութիւնը: Այդ նահանգի վարչութեան ղեկը Գա-
լայ-Ղամանի ձեռքումն է: Այդ նահանգը մտնելը
նոյնքան դժուար է կլիմայական և ֆիզիկական
պայմանների պատճառով, որքան և վստաղաւոր
է ճանապարհորդների կեանքի համար: Ռուսաց
կայսերական աշխարհագրական ընկերութեան
միջնորդութեան համեմատ վերոյիշեալ ճանա-
պարհորդութեան համար Պրոքիմովսկուն պետա-
կան զանգարանից տրուել է 53,600 ռուբլի: Պե-
տերբուրգի Պրոքիմովսկին և իր աշխատակիցնե-
րը ճանապարհ ընկան արդէն:

Անգլիան այս տարի պատրաստուած է հանդի-
սաւոր կերպով տօնելու իր ամենահռչակաւոր
զերասաններից մէկի՝ Էլզաբեթ Գլորիայի ծննդեան
հարիւրամեակի տարեդարձը, որը վախճանվել է
1833 թվ. մայիս ամսին: Զարմանալի է, որ մեծ
դերասանի կենսագրիչներին ոչ միայն չէ աշուղդ-
որչել ճշդութեամբ նրա ծննդեան տարեթիւնը, այլ
մինչև անգամ չեն կարողանում մօտաւորապէս ո-
րոշել նրա ծագումը: Կենսագրիչներից մի քանիս-
նոր խօսքերով, Փին Նորթօլի դուքսի և Տիգրալի
դերասանուհու ասորիներն որդի է եղել, իսկ ուրիշ
կենսագրիչների խօսքերով, Փին Նորթօլը հասարակ
հիւան էր, իսկ մայրը Ալեքս. դերասանուհին, որը
Եւրոպայի ֆիլիպսի անհարգաւոր աղջիկն էր: Այդ-
պիսով հաստատուած է այն փաստը, որ Փինի ե-
րակներում, այնու ամենայնիւ, հոռու էր անդ-
լիական անգլիականի արհեստ Մանկութեան ժա-
մանակ Փինի կրթութեամբ պարապում էր տիկին
Տիգրալի: Երբեք տարեկան հասակում ապագայ
մեծ դերասանը դուրս եկաւ Վոնդոնի օպերային
թատրոնի բեմը: Աղաքից ղերում մի ինչ-որ
բաղնուկ, բայց մի անգամ մի ինչ-որ շարու-
թեան համար փոքրիկ դերասանին դուրս արին
թատրոնից: Գրանից յետոյ փոքրիկ Փին թախա-
ռական և աստանդական կեանք էր վարում, և
զանազան պանդոկներում ու հիւրանոցներում
ապրում էր իր նայթիքով իր համար: Նրա աս-
տանդական կեանքի վրա առաջինը ուշադրու-
թիւն դարձրեց նրա դաստիարակչուհին՝ տիկին

Տիգրալի: Նա օգնութեան ձեռք կարկառեց նրան,
հաւատացած լինելով, որ Փինի խաղը իրան ևս
մեծ օգուտներ կը տայ: Երկար թափառումից յե-
տոյ, որի ժամանակ նա հռչակաւոր դերասանի
անուն վաստակեց, Փինին վերջապէս աշուղդեցաւ
Գրիգորիանի թատրոնը ընդունելով, որը այն ժա-
մանակ առաջին թատրոնի հռչակ ունէր: Նրա
առաջին դերը Գրիգորիանի թատրոնում Շէյլօկի
դերն էր: Փին այնպիսի աշուղդեցումը կատարեց
այդ դերը, որ այդ ներկայացումից արդէն մեծ դե-
րասանի անուն վաստակեց: «Չը նայելով նրա ոչ-
բարձր հասակին,—ասում է անգլիական թատրոնի
պատմաբաններից մէկը,—նա հակա էր երևում, նրա
խօսքերը կրակի նման այրում էին, նրա շարժ-
մունքները կայծակի տպաւորութիւն էին գոր-
ծում: Փին օրվայ հերոս դարձաւ: Նրա մասին
գրում էին, տպում էին, խօսում էին ամեն տեղ,
նրա համար բացվեցան Անգլիայի բոլոր առաջին
տնայի դուռները: Փառքը չըմբռնեց նրա գլուխը
իր մասնաւոր և ընտանեկան կեանքում մինչև
այդ ժամանակ համեստ Փին սկսեց դրօսասեր
կեանք վարել, հարբել, և վերջապէս, թողնել իր
կնոջը և երեխային: Կրա այդ վարմունքը նրա
դէմ ընդհանուր զայրույթ յարուցեց, և թողնած
իր բոլոր բարեկամներին, Փին շտապեց Ամսթրիկա
գնալ, յուսովով այնտեղ վերականգնելու: Անգլիա-
յում կորցրած փառքը, բայց այնտեղ էլ նա ա-
շուղդութիւն չունեցաւ: Զբօսասեր կեանքի սովոր-
ութիւնը և վատ անունը լրացրին մնացածը և
Փին, խայտառակութեամբ, ստիպւած էր Ամսթրիկայից
ևս հեռանալ, ուր մի ժամանակ անգլիան աշուղու-
թիւն էր ունեցել: 1833 թվ. Փին Փին վերադարձաւ
Անգլիա: Մարտի 25-ին նա բւժ գլուխ եկաւ Օ-
տելլի: Գերում իր որդու հետ միասին, որը խա-
ղում էր Նաթի դերը: Բայց խաղալու ժամանակ
նա յանկարծ չնշարժելով իր զգաց, և կուսնա-
լով դէպի իր որդին ասեց՝ «այլ ևս չեմ կարող
խաղալ: Վերադարձու իմ փոխանակ»: Հիւանդին
Ռիչմոնդ տարան: Այնտեղից նա դրեց իր կնոջը
վերադարձի, մոռացիր բոլորը և ներքի ինձ:»
Նոյն թվ. մայիսի 15-ին նա յանկարծ վեր թռաւ:
մահակալից և աղաղակեց՝ «Քի բերեք ինձ, ձի,
ամբողջ թագաւորութիւն մի ձեռն համար: Շուտով
նրա ոյծերը թուլացան, և նա վախճանվեցաւ:
Նրա գերեզմանը վրա Ռիչմոնդում մինչև այժմ
ևս կայ մի համեստ մահաբաժան թէպէտ և այդ
մահաբաժան երկի ամենքն արդէն մոռացել են,
բայց Փինի հռչակը մինչև այժմ ևս չէ անհետա-
ցել: Նրա հայրենակիցների և ամբողջ աշխարհի
կրթութեամբ մարդկանց յիշողութիւնից:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՓՈՐՈՉ, 24 օգոստոսի Գաղաքական շրջաննե-
րում լուր է տարածված, որ իբր թէ գնեցրաւ
Բուլանօժ Ռուսաստան կերթայ իր սպասած հե-
ռագիրները ստանալուց յետոյ, սակայն ճիշդ ոչ
ոչ չէ գիտէ ոչ նրա իսկական դիտաւորութիւն-
ները, և ոչ մինչև անգամ այն, թէ այժմ նա ուր
է գտնվում:

ԴԻՃՈՆ, 24 օգոստոսի: Վէգործում, Ուշի վրա,
աղետ պատահեց ընկերների փշանալու և երկու զը-
նացքների ընդհարելու պատճառով, որի ժամա-

պէտք է գնալ: Վիճելով էլ ամենքը զնուծ են:
Առաւօտը ծագելուս պէս, քարավանի ինքնուրոյն,
առողջ անդամները ոտի են կանգնում, գցում են
իրանց ուսը իրանց պարկը և կանչում են միւս-
ներին էլ, որ վերկենան և ճանապարհ ընկնեն:
Ամենքն էլ վեր են կենում: Քարավանի ինքնուրոյն
և առողջ անդամները առաջ են ընկնում, և ա-
ռաջ են գնում համարձակ կերպով, դրանք քա-
րավանի մէջ կոչվում են «զուլա»։ քարավանի մի
մասը, որը իսկապէս բաղկացած է թուլաւորից, և
երկուստ մարդկերանցից, սկսում է յետեւից դա-
նալ կերպով դնալ. այդ յետեւից գնացող մասը
կոչվում է «պոչ»։ Ամբողջ ժամանակ այդ «պոչը»
անդադար տրտնում է թէ այդ ճանապարհով չի
պէտք է գնալ, թէ այդ ճանապարհը երկիւղալի է,
երկար է, ու չեմ կը համեն, «գողերի ձեռք
կընկնեն, և այլ ևս իրանց սիրելի գիւղը չեն վե-
րադառնայ: Սակայն «զուլա» առանց ուշադրու-
թիւն դարձնելու շարունակում է գնալ. «պոչն»
էլ համ մի կողմից տրտնում է, համ էլ տըրտն-
ջալով և վայնասուն տալով շտապում է շատ յետ
չը մնալ «զուլայից», զգալով որ եթէ յետ մնայ,
պէտք է ընկնի, մեռնի, և ոչնչանայ անծանօթ մի
անկիւնում...

Ճիշդ այդ «պոչն» են յիշեցնում մեզ մեր բու-
տնականները, որոնք համ տրտնում են,—համ
էլ տրտնալով հետեւում են իրանց հակառակ բա-
նակի ընթացքին...

Մարի, գաղափարի և գրականութեան ասպա-
րիզում այսպիսիներն, ի հարկէ, չէ վիճակված
ինքնուրոյն գիրք ունենալու, ինքնուրոյն գործ կա-
տարելու: «Ռուսիայի հարազատ դասակների
պաշտպանած բոլոր սկզբունքները մեռնում են, և

նակ 12 մարդիկ սպանվեցան և 12 մարդիկ այ-
լանդակվեցան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 օգոստոսի: Երեկ Նոցա կայ-
սերական Մեծութիւնները Թագաւոր կայսրը և
Թագուհի կայսրուհին իրանց Օգոստոսիւտ բոլոր
երեկաներով և Մեծ իշխան Վալդիմիր Ալեքսան-
դրովիչի ուղեկցութեամբ բարենաճեցին ուղևոր-
վել դէպի Ռուսաստանի հարաւ: Նոցա Մեծու-
թիւնները Թագաւորաւորի և Վալդիմիր Ալեք-
սանդրովիչ ու Գեօրգի Ալեքսանդրովիչ Մեծ իշ-
խանների հետ կը բարենաճեն Խարկովի և Օդէ-
սայի զինուորական շրջանների զօրախաղերը այցե-
լել:

ՆԻՃՆԻՆՆՈՎԳՈՐԾԻ, 25 օգոստոսի: Երեկ սո-
նավաճառային առևտրականների ժողովում կա-
յացաւ բոլորային մասնաժողի հետեւալ վճիռը.
միջնորդել, որ թոյլ չը տրվի նոր ընկերութիւն
կազմակերպել Բագուից մինչև Բաթում նաւթանցը
չինելու համար, որովհետև այդ ձեռնարկութեան
կազմակերպութեան համար չնորված պայմանա-
գրական ժամանակամիջոցն անցաւ: Միջնորդու-
թիւնը ներկայացնելու համար հինգ անձերից
բաղկացած պատգամաւորութիւն է ընտրված:

ՄԵՆՆԱՋԻ, 25 օգոստոսի: Այստեղի քաղա-
քային խորհուրդը ընդունում էր ուսուսաց «Ամբի-
րալ Կորնիլով» նաւի օֆիցերներին Մէրը Ռու-
սաց կայսրի կենացն առաջարկեց, որի ժամանակ
լսվում էին «կեցցէ Ռուսաստան» աղաղակները:

ԲԵՐԼԻՆ, 25 օգոստոսի: Այստեղ Բէլգրադից
տեղեկութիւն է ստացված, որ չը նայելով պաշ-
տօնական հերքումներին, Ռիստիչի Արքայազն գա-
լը բոլորովին պատահական բան չէ. նրա գա-
լուստը, ըստ երեւոյթին, կապ ունի Թագաւորու-
թեան ներքին դրութեան և շատ կարելի է կա-
ռավարութեան սխառեմայի պատրաստվող փոփո-
խութեան հետ:

ՕՍՏԵՆԻՅԻ, 25 օգոստոսի: Շաբաթ օր գերմա-
նական, ֆրանսիական և աւստրիական ֆինան-
սիսները այստեղ կայացած կոնֆէրենցիայում
վճարված է միջադպարին սինդիկատ կազմել ձեռք
բերելու Թիւրքիայից փոքրասիական երկաթուղի-
ների կառուցման արժօնութիւնը: Այդ ժողովի
նախագահ կը լինի Բէլգրադցի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 օգոստոսի: Հրատարակված է
միջնորդների մասնաժողովի որոշումը՝ ասիական
վաճառանոցները տանվող շաբաթի համար պըն-
միսներ տալու նշանակված կրեդիտը ծախսելուց
յետոյ, առձեռն դրամների փոխարէն, մինչև
1891 թվ. մայիսի 1-ը առաւ ի հաշիւ շաբաթի
վճարման անդորրագրեր այն կարգով, որպիսին
հաստատված է արտասահման տանվող շաբաթի
ակցիդը վերադարձնելու համար:

ՆԻՃՆԻՆՆՈՎԳՈՐԾԻ, 26 օգոստոսի: Միջին-ա-
սիական բոլոր առևտուրը դանդաղ է գնում.
մեծ առուծախսեր չեն եղել. Բուլաւարայի բոլոր

համեմատեցէք. և եթէ անհիւ մարդ էք ասացէք
մեզ, արդեօք դրանց լեզուն է մօտեցել «Մշակի»
չեղալի լեզուին, թէ «Մշակի» չեղալի լեզուն է
մօտեցել դրանց լեզուին:

Ասացէք, եթէ քաղութիւն ունե՞ք՝ ճշմարտու-
թիւնը խոստովանելու: Այդ առաջինը—Իսկ երկ-
րորդը՝ եթէ դուք, պարոններ, համոզված էք, որ
տարեց տարի մեր աշխարհաբարը աւելի ինքնու-
րոյն է դառնում, թո՞ք ամբողջ է իրանից գրաբա-
րի աղեղեղութիւնը, եթէ համոզված էք, որ տա-
րեց տարի այդ լեզուն աւելի է ժողովրդականա-
նում, և աւելի է ընդունում օտար բառեր, ուրեմն
կը նշանակի, որ դուք քիչ քիչ մօտենում էք այն
ճանապարհին, որով ընթացել է «Մշակի» չեղ-
ւան: Իսկ այդ ճանապարհը բոլոր նոր լեզուներ
ընդհանուր և բազմակողմանի դարգաց-
ման արդէն յայտնի ճանապարհն է: Եւ եթէ «Մշ-
ակը» այդ ճանապարհի վրա նոյն իսկ մի քանի
թերութիւններ ունի, դրա ուղղելը և լրացնելը
պատկանում է ժողովրդական, և ոչ թէ գը-
րաւոր երեսն-անշաբթ կուսակցութեան:

Վերջացնելը ուրեմն:

Մեր բոլոր ասածներից ընթերցողը տեսաւ ար-
դէն, որ մենք իսկապէս չը մտանք մեր աշխար-
հաբարի դարգացման պայմանների մանրամասն
քննադատութեան մէջ, քանի որ, ինչպէս վերին
էլ յիշեցինք, «Արձագանքը» երկար յօդուածները
պարունակելով անվերջանալի հակասութիւններ
և վերացական անհասկանալի բառախաղութիւն-
ներ միայն, անարժան են այդպիսի մանրամասն
քննադատութեան: Վերջապէս մեր աշխարհաբա-
րի դարգացման հարցը շատ էլ կարօտ չէ պաշտ-
պանութեան: Մենք միայն պատասխանեցինք

մեռնում են նոյն իսկ իրանց պաշտպանների կեն-
դանութեան ժամանակ: Այդպէս է եղել ամեն
տեղ. այդպէս էլ կը լինի մեզ մօտ: Այդպէս է
եղել ամեն տեսակ հարցերի վերաբերմամբ,
այդպէս էլ կը լինի և լեզուի վերաբերմամբ: Դը-
րանք առաւօտից մինչև երեկոյ իրանց հակառակ
բանակին գիւնելով ասում են, «ձեր ընթացքը կը
մեղցնի լեզուն, կը խախտի նրա զարգացումը»,
բայց լեզուն, չը նայած այդ վայնասուններին, շա-
բուանկում է իր ճանապարհը և զարգացումը:

Սրանից մի քանի տարի առաջ, երբ ռուսաց
գրականութեան մէջ էլ վեճ կար օտար բառերի
և օտար լեզուների աղեղեղութեան մասին, ռու-
սաց բուրժուականները մէկը, «Гражданинъ»
անունով ռուս լրագրում գրում էր թէ չէ կարելի
ասել՝ С. Петербургскаго университета филоло-
гическаго факультета первого курса студентъ,
այլ համարելով այդ պարբերութիւնը օտարաբա-
նութիւն և լեզուի աղաւաղում, առաջարկում էր
այսպէս գրել. «Святой Петроградской всеобщни-
цы, отдѣления языкознания, первого бѣга
занятнигъ»։ Այդ անձոնութիւնը մնաց ի հար-
կէ, «ձայն բարբառող խառնաբառ» և լեզուի զար-
գացումը շարունակեց իր ընթացքը:

Այժմ ամբողջ Ռուսաստանը ծիծաղում է այդ-
պիսի ջանքերի վրա: Նոյն վիճակին պիտի ար-
ժանանան և մերոնք, որոնց բոլոր ասածներից,
գրածներից և վերացական փիլիսոփայութիւննե-
րից, տարիներ անցնելուց յետոյ, կը մնան մի
այն՝ բ ա ռ ե ի, բ ա ռ ե ի, և բ ա ռ ե ի:

Խ. Մ.

վրա գնողները դանդաղում են. այդ բոլորը վատ է մարդկանց. խիվայի բոլորը յատկապես մարդկանց է. պարսկական բրդի գները դեռևս 12,000 պուլ է ծախված 5 ր. 50 կոպեկից մինչև 5 ր. 80 կ. պուլը: Խանեան ուղտի բոլորը դեռևս է ծախվել: Կաղանի կաշին 22 ր. է

ծախված: Կաղանեան բաշը ծախվեցաւ 7-ից մինչև 7 ր. 50 կոպեկ, սիբիրեան բաշը մինչև 9 ր. 25 կ պուլը: Զուրը վաճառում և Օկայում պահպանում է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ պատրաստ է 500 բուրդի տալիս ունի ծախվել մեր դպրոցներում, շաբաթական 26—30 դասեր յանձն առնելով՝ երկդասեան դպրոցում ուսնաց լեզուով աւանդելի առարկաներից, իսկ միդասեան դպրոցում նաև լեզուաբանութիւնից: Պէտք է ունենայ սենեակ, ծառայ, վառելիք և ճանապարհածախս:

Հասցէի մասին հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը: 1—5

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՐԱՌՅԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնելու ի դիտութիւն Հասարակութեան, որ օգոստոսի 25-ից կը լինի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ նոր աշակերտների միմայն երկրորդ, երրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, իսկ նախապատրաստական և առաջին դասարաններում բոլորովին տեղ չը կայ:

Ցանկացողները պէտք է խնդրի հետ ներկայացնեն իրանց ծննդական և ծաղկի վկայականները ևս: Ուսումն սկսվելու է սեպտեմբերի մէկից:

Տեսուչ՝ Ս. Բ. Բէգ-Նազարեանց 3—3

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԻ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱՎԱՅԻՆ կոնստաոյիլի ատենի մէջ նշանակած է ԱՃՈՒՐԻՄ առաջիկայ սեպտեմբերի 16-ին, առանց կրկնաձուրդի, կապալաւ տալու համար մի կրպակ, որ պատկանում է Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ եկեղեցուն և զտանվում է Միխայիլովսկայա փողոցի վրա նոյն եկեղեցու մօտ: 3—3

ԽԱՐՓՈՒԹԻ Հայոց Տիպական նորարացողացոյ ուսումնարանում աշակերտների ընդունելութիւնը սկսված է օգոստոսի 25-ից: 1—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ ցանկանում է որ և է մի տեղ հայոց դպրոցներում ուսուցչութեան պաշտօն ունենայ: Կարող է աւանդել՝ հայոց լեզու, ուսնաց լեզու, ուսնաց աշխարհագրութիւն և պատմութիւն, նոյնպէս բնագիտութիւն: Շաբաթական 26 դասին 600 բուրդի վարձատրութիւն: Պատրաստ է գնայ ամեն տեղ:

Հասցէ. ԿԱՐՍԵ, Երվանդու Բասիլեւիչու Կազարիպու. 4—5

ՇԻՐԱՆՁԱՒԷ

„Ա Ր Ա Մ Բ Ի Ն“

Վէպ:

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. կենտրոնական գրավաճառանոցում, իշխ. Բէհրեանի և Աբգ. Յովհաննիսյանի գործակալութեան մէջ և հեղինակի մօտ. Тифлисъ, Редакция «Арцаганъ», Ширвазадэ.

Գինն է 75 կօպ.

Ճանապարհածախսով 1 ր.

6—10

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՊՐՕՎԱՆՍԱՅԻՆ ԻԻՂ

ԳԻՏՈՒՆ-ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մօսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա: № 6. II. Է. Օ. (1—3)

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուղթանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթանութիւն համարիչի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գերագրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօյուզում, Լարօրատօրնայա փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր ֆրիդմանի տանը, № 9 Սերգիեյեւսկայա և Նազորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՆԱՊԵՍ եղբ. Ծովանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Ուսարաքադաքցիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

9—20 (Ե. Շ.)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լ Է Օ

ՊԱՆԳՈՒԻՏ

Գինն է 15 կօպեկ: Վաճառվում է ԲԱԳՈՒ՝ Տիգրան ՂԱՆԳԱՎԱՍԻԱՆԻ մօտ, ՇՈՒՇԻ՝ Անդրէաս ԱՐԱՀԱՄԵԱՆԻ մօտ: 7—8

Լոյս տեսաւ

ՍՍՄՈՒՆԷԼ ՍՄՍՈՒՍ

„Բ Ն Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն“

Գերմ. Թարգմանեց ֆիլիպպոս Վարդանեան: Գինն է 1 ր. 50 կօպ.

Նոյն Թարգմանողի

ՇՄԻՏԹ, Բենիամին Ֆրանկլին, 2-դ տիպ. — ր. 40 կ.
Գէորգ Վաշինգտոն, 2 տիպ. — „ 60 „
Հոմերի Իլիականը, պատկերազարդ 1 „ — „
Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 „ 20 „

(Ճանապարհի ծախսը Թարգմանչի վրա է): Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Марино-Анановское училище. 3—4

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՍՏԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ

ՍՈՆԻՍԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆԻՑ



Այդ էլիկսիրը հնարել է 1373 թ. ին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՕ:

Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ դործածութիւնը պահպանում է առաջնորդ փշանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը:

Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են դարձեալ ԱՍԱՄՆԱՓՈՇԻ և ՊԱՍՍԱ առաջնորդ սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել ամեն փոքր ի շատէ նշանաւոր դեղատներում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆիւմերական մագաղաններում:

ՊԼԱՒՈՐ ԱԳՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106. 25—30 (Շ.)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ՆԻ ԳԱՋԱՑԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերկմայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գետեղվում է Լօրիօ և Ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱՅԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՋԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ևս յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍՏԻ մի ՊՐՕՎԻԶՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ՋԻՎԻՆԻ հաշակաւոր ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աշրդութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորհով այն օժանդակ միջոցներ, որ տալիս է դիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի դէպքերեան, մրդալին և դազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՒՆԵՐԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշի, Էմս, Կարլսբադ, Մարիէնբադի ջրերը, Լուժնայի ջրերը բոլոր յայտնի աղիքների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արտեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխածին գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեն համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպք գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածախրութիւններից խուսափելու համար, խնամարարաբ խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

32—50 (Ե)

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈՒՆԱԻՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Ծոգեաւերը Բաթումից դուրս են դալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1,500 տոննա ունեցող շոքերաւերը Բաթումից դուրս են դալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պօլիս:

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԵՐՐՈՒՍԻՆ ԹԻՖԼԻՍԻՄ—Գօլովինսկի պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄԻՄ—Իշխ. Գուրիէլիի տանը:

20—40

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏՈՒՄ

ՍՏԵՓԱՆՈՍ ԲԱՏԻԿԻ գրավաճառանոցում ծախվում են ի միջի այլոց Ս. ՓԻԼՈՍՏԻՆ Կետեալի բեկերը.

- 1) «ՍՈՓԵՐԻ» 30 կ.
- 2) «ԿՈՐԱՍՏ ՄԱՐԳԱՐԻՏ» 50 „
- 3) «ԶՐՈՅՆԵՐ» բնական պատմութիւնից, պատկերազարդ 30 „
- 4) «ԶՐՈՅՆԵՐ» բնական պատմութիւնից՝ երկրորդ մաս 40 „

Հասցէն այսպէս է. Ново-Ваязетъ, Степану Батикъ.

2—2